



հով կրնանք համարել իր յաջողութիւնը :

Արփիարի խակութիւնը իր ընտրած նիւթին մէջ կը հշտուի մանաւանդ Պարսկաստանի մասին Ռուսիոյ խորհուրդներու սխալ ու անկապ մեկնութեամբ :

Եթէ Ռուսիան զիտաւորութիւն ունեցած ըլլար Պարսկաստանի մէջ քրիստոնեաներու ապահովութիւն առջ բերելով գրաւման պատրուակ ուր ստեղծել, տրամադրելի ա՛յնքան միջոցներ ունէր որ սպասաւորի անձարակ խաղին զիջանիլ տխմարութիւն կըլլար պարզապէս : Եւ եթէ իրօք իր թեւադրութիւններուն արդիւնքն էր Դաւթի գէպքը, գոնէ լուծութեամբ քաջալեքելու, արծարծելու էր զայն, որպէս զի իրապէս անտանելի կացութեան մը հետեւանքով իր միջամտութիւնը քաղաքական անհրաժեշտութիւն մը դառնար : Մինչդեռ թրքահայաստանի մէջ թրաւոր գիւղեր անտարբերութեամբ զիտող Ձարի գործակալներուն յանկարծական տագնապն ու անարկու սպանալիքը քանի մը հայ տուններու կողմաւորութիւն անտարակուսելի կերպով կապացուցանեն, որ այդ գէպքը ուսական շահերուն հակառակ էր եւ տարբեր պետութեան մը դաւերուն արդիւնք : Միւս կողմէ պէտք է նկատի առնել որ Ռուսիան այնքան ալ ազատ չէ կեդրոնական Ասիայի յառաջխաղացութեան մէջ : Աֆղանիստանի լեռներէն կասկածաւոր աչքեր ուշադիր կը հետեւին իր շարժումներուն : Ու Սուլթանին բազուկը զօրացնող նիքոլայի հոգածութիւնը Պարսկահայերու մասին՝ շատ ճղճիմ պատրուակ մը պիտի ըլլար Անգլիոյ ընդդիմութիւնը զսպելու :

Թիւրքմէնչայի զաշնադրութենէն ետքը Պարսկաստան տեսակ մը ճորտ գարձաւ Ռուսիոյ եւ 1838ին Նիքոլայ Ա. ուղեով անուղղակի փորձ մը ընել Հնդկաստանի դէմ՝ Ռուս զօրապետներէ հրահանգուած Ծահր բանակը հասաւ մինչեւ Հերաթ : Բայց հոն Անգլիոյ կանխագրու շրջանները, եւ Պարսից ծոցի պարսկական նաւա-

հանգիստներու գրաւումը անգլիական նաւատորմի կողմէ՛ շուտ ըստ թափեցուցին շահը, որ անմիջապէս ետ կանչեց իր աշխարհակալ գունդերը : Այն ժամանակէն սկսաւ Պարսկաստանի մէջ անգլիական մաքառում մը ուսական ազդեցութեան դէմ : Անգլիական առեւտրական տուներ հաստատուեցան Թէհրանի եւ բոլոր գլխաւոր քաղաքներու մէջ : Անգլիացի գրամատէրեր մենաշնորհներ ու մաքսատուներ ձեռք անցուցին եւ այսօր Անգլիոյ ազդեցութիւնը արհամարհելի քանակ մը չէ Իրանի մէջ : Այս տնտեսական մրցումն չընկճուելու համար Ռուսիոյ շահերը կը պահանջեն պաշտպանել հայերը, որոնք ուսական առեւտրին գլխաւոր միջնորդներն են : Մանաւանդ որ Ռուսիա վախճալու պատճառ մը չունի Պարսկահայերէն, որոնք քաղաքական ձգտումներէ բացառապէս զուրկ են : Մինչդեռ ընդհակառակը իրեն համար վրդովելու ծանր շարժառիթներ կան Պարսկաստանի մէջ նոր գործի սկսած թրքական ազդեցութեան օտնձգութիւններէն : Համալուծութեան մեծ խորհուրդին ձգրող Սալիբան՝ առանց յուսահատելու արդի Ծահր անտարբերութենէն՝ դեռ կը շարունակէ իր ջանքերը Պարսկաստանի մէջ : Եւ ասոր կենդանի ապացոյցներն են յաճախակի Թէհրանի ճամբան բռնող՝ թանկագին ընծաներով ու պատուանշաններով բեռնաւորուած Օսմանեան պատուիրակները, եւ միեւնոյն զաղափարին՝ ախտեան Եէյի-Պէլայլուտի սիրագիւղ ընդունելութիւնը երկարով մէջ : Այս մասնակի յաջողութիւնը զիւրացնելու համար Սուլթան Համիտ իր հիւպատոսներու եւ վարձկաններու միջոցաւ—որոնց մէջ ցաւալի է ըսել հայեր ալ կը գտնուին—սկսաւ յուզել Պարսիկներու մտերմանքը : Եւ Դաւթի գէպքն ու Սալմաստի բռնաբարութիւնները կը վկայեն թէ որչափ գործ տեսաւ Համիտի նման առատաձեռն կաշառող մը այնպիսի երկրի մը մէջ ուր կաշառով շատ բան հնարաւոր է :

նութեան առարկայ եղող կնճռոտ հարցին՝ քե ի՞նչ եւ ազգայնութիւն, ի՞նչ նրա սկզբունքը եւ որո՞նք նրա յասկանիչ սարքերը :

Պատմական Տեսութիւն. — Որք օրերու, ընտանիքներ կամ անհատներ, աւելի կամ նուազ թուով միացման երեւոյթը, իրենց հանրական իրաւունքները պայտպանելու համար, սովորաբար, կոչուում է ազգային սկզբունք : Սակայն այս ընթացիկ բանաձեւի մէջ ամփոփուած գաղափարն իսկ բոլորովին անծանօթ է եղել նախկին քաղաքակրթութեան : Վասնզի պատմութեան ընթացքում ազգ բառի գաղափարը, շրջափոխութեան օրէնքի համաձայն, զանազան իմաստ, ընդլայնումն է կրել :

Առանց շատ հեռուն երթալու «գիտակցական միացման» առաջին սաղմը պիտի որոնել ցեղական կեանքի մէջ : Զի եթէ մարդոց ըստ Արիստոտելի, «քաղաքական կենդանի» է, ապա համայնակից—ընկերի իրաւունքի պաշտպանութեան երեւոյթը պիտի յառաջանար միայն այն ժամանակ, երբ այդ «քաղաքական կենդանին», այս եւ այն պատճառով, միացած լինէր իր նրամաների հետ : Իսկ այդպիսի համալուծման առաջին օղակն է ցեղային շրջանը : — Հետեւաբար փոխադարձ

Ռուսիա չէր կրնար անտարբեր մնալ այս խոշոր ձգտումին հանդէպ, որ թէեւ այսօր կը խրախուսէ Պարսիկը ձեռք կարկառել խալիֆային հայաշինչ քաղաքականութիւնը զիրացնելու՝ օր մըն ալ անշուշտ հզօր դաշնակցութիւն մը պիտի գտնայ նոյն իսկ Ռուսին դէմ :

«Իրենց թերթերով Ռուսիան մեզի դէմ զայրացնելու ամէն ջանք ընող նորեւեկ հայրենասէրներու» դէմ սրամտող Չօպանեան լաւ կընէր եթէ նախ խօսք հասկցնէր իր Արփիարին, որ այսպիսի անմիտ տեսութիւններու վրայ հիմնուող հակառուսական անտեղի պրօպագանտ կընէ :

Իսկ Ասորպատականի նախկին առաջնորդ Սարահեան վարդապետի պաշտօնէ հեռանալուն միակ պատճառը ժողովուրդի զգոհութիւնն էր : Ծեղական ժողովուրդը քանիցս սուրժեր էր այդ մարդու թուլամտութիւնն ու Պարսկական շրջանակներու հըռ կամակատարութիւնը : Ինքզինքը գեռ Ամերիկայի մէջ կարծելով ազգային յարաբերական խնդիրները օրինական ձեւակերպութիւններով կուզէր կարգադրել Պարսկաստանի պէս երկրի մը մէջ, ուր համարձակութիւնն ու հեղինակութիւնը միայն կրնան գործ տեսնել : Եւ հիմա տաճկահայ եպիսկոպոս մը կը նշանակուի տեղը՝ հակառակ Արփիարի կարծիքին :

Եթէ Արփիար անպատճառ ապագայ վախեր կուզէր ցուցնել պարսկահայերուն, իր գրիչը առատ նիւթ ունէր : Ամէն հայ 150,000 ազգակիցներ կը հաշուէ Պարսկաստանի մէջ, բայց զժբախտաբար շատ քիչ կը հետաքրքրուի անոնց միճակին :

Հայութեան այդ կղզիացած, լըքուած հատուածը ամէն զգալուն այցելուի կարեկցութիւնը կը շարժէ իր մատարական ու հոգեկան սոսկալի անկումով, ուր կարծես ժամադիր եղած են մեր տարալախտ ցեղի կրած դարաւոր սարկութեան բոլոր աղետալի հետեւանքները : Անտարբերութիւն զարթոյլ, անտարբերութիւն հանրային գործերու, անտարբերութիւն մինչեւ իսկ եկեղեցիին եւ

վերջապէս դիակնային անշարժութիւն մը, որմէ փառաւորապէս կօտուելն օտար մարդորսներ : Բողոքական միախօսարութիւնը ցարդ լոթի ու միջիկ անազին հունձեր ըրած է պարսկահայերու մէջ : Կազարաւոր հայ մանուկներ կը խորթանան անոնց զարթոցներուն մէջ եւ անուղղելի օտարամտներ կը դառնան : շատ տեղեր հայ եկեղեցիները ժողովարաններու կը փոխուին : Եւ կորուստի այս վիթխարի հոսանքը կասեցրնելու ճար մը խորհող չիկայ, որովհետեւ մամուլ չիկայ, լրագրութիւն չիկայ, շատ սակաւաթիւ են զարգացած, խղճամիտ հայեր :

Կը յուսանք թէ՛ վերջի խտտութիւնները պիտի սթափեցնեն մեր պարսկահայ եղբայրները այս կործանարար թմրութենէն եւ յորդոր կը կարգանք օտար երկիրներու մէջ անգործ թափառող զարգացած հայ երիտասարդներու հոն փութալ, լրագրութիւն հիմնել, ուսուցչութեան պարապիլ, որով ազգասիրական մեծագոյն պարտականութիւն մը կատարած պիտի ըլլան : Արդէն սիրելի սօքթօր մը այս պարտաճանաչութեան զովելի օրինակը տուաւ ու իր ջանքերը մեծ արդիւնք կը խոստանան :

Հակառակ պարագային՝ եթէ այս վտանգաւոր անտարբերութիւնը յարատեւ է, ինչ որ ալ ըլլայ Պարսկաստանի ճակատագիրը, ակներեւ կորուստ մը կըստանայ պարսկահայերուն :

Ահա՛ իսկական վախը պարսկահայերուն համար :

ԿԱՐԻՃ

Եզրգատու

ՃԱՄՐՈՐԴԻ ՅՈՒՇԱՏԵՏՈՒՅ

—(—) Բ.

Մարտի վերջերին է. Օղեսայում եմ, որը ուսական ամենազեղեցիկ քաղաքներէ մէկն է թէ՛ իր բնական դիրքով և թէ՛ արուեստական շինուածքներով :

Օգնութեան գաղափարի առաջին սաղմ—գաղափարը, առաջին տարրը, ցեղականութեան մէջ պիտի որոնել :

Այս շրջանի մէջ, թէեւ անհատը ցեղապետի ինչ եւ իրն է եղած եւ յաճախ շարժականութեան, գործի է մտած իր պետի հրամանով,—այնու ամենայնիւ այս տեղ, առաջին անգամ, եթէ ոչ գիտակցական, զէթ ցեղային—արիւնային մի տեսակ ընազգում նրան զրգել, ստիպել է իր անհատական իրաւունքի պաշտպանութեան գաղափարը մերձաւոր ցեղակցի իրաւունքի պաշտպանութեան գաղափարի մէջ պետել : Համալուծման զարգացման այս առաջին օղակի մէջ, հանրական ծագումն, լեզու, կրօն, ընդհանուր սովորութիւններ իրենց արդիւնաբար են ունեցած միայն ցեղային անձուկ ամբողջութիւնն : —Ուրեմն այս շրջանի մէջ ընկերով օգնելու գաղափարը ընդարձակութիւնն մինչեւ ցեղային սանձան է հասած : Պարզ է, որ ցեղային կապերով կապուած անհատներ, ընտանիքներ իրութիւնը բաւականանում էր պաշտպանելով միայն եւ միայն իր ցեղի շահերը եւ իրաւունքները, ոչ միայն օտար, արտաքին թշնամիներին դէմ, այլ նոյն իսկ իր համարին ցեղերի, որոնք միեւնոյն հանրական ծագումն էր, լեզուն եւն, ունենալով իրմէ

բաժանուած են եղել բուն ցեղային եւ նիւթական շահերով :

Ընդհանր շրջանի մէջ իշխել է ցեղապետը (clan), իսկ մղիչ գաղափարն է եղած ցեղաւարտները :

Ուրեմն զարգացման նախնական շրջանի մէջ գտնուող ազգերի, օրինակ այսօրուայ քրդերի, միացուցիլ գաղափարն է ցեղային շահը, ցեղային իրաւունքը :

Ենդակցութեան առաջին շրջանից յետոյ տեղի է ունեցել մի քանի ցեղերի միացումն : Այս պարագային, համեմատաբար, գաղափարի աւելի ընդլայնումն է կատարուած : Այլ եւս մի ցեղ չի բաւականացել միայն իր ցեղային շահերը պաշտպանելով այլ ի հարկին նա օգնութեան է հասել նաեւ միւս ցեղերին, որոնք ունեցել են նոյն հանրական ծագումը, լեզուն, կրօնը, գուցէ եւ հայրենիքը, ինչ որ ինքը :

Զարգացման այն շրջանի մէջ էին զերմանական ցեղերը եւ դարում : Զարգացման այս շրջանի մէջ են եղել մեր նախահայրերը, ոչ միայն Հայկազանց, այլ եւ նոյն իսկ Արշակունեաց օրօք :

Ս. ՍԱՊԱՆՆԻՍԻԱՆ

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՍԿՋՐՈՒՆԲԻ

ՇՐՋԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ

Եթէ կայ մի սկզբունք որ ժողովուրդները երկարատեւ եւ բեղմնաւոր շարժականութեան մէջ է զրել, եթէ կայ մի զօրաւոր գաղափար որ յամառ պայքարից յետոյ աշխարհիս զանազան մասերը քաղաքականապէս բոլորովին կերպարանափոխ է արել եւ իր հետեւանքով մարդկայնութեան քաղաքակրթութեան հոսանքի վերայ ծանրացել,—ապա այդ գաղափարը անշուշտ ազգայնութեան սկզբունքն է եղած :

Եւ արդարեւ, տասնեւիններորդ դարի մղիչ գաղափար—ոյժերի մէջ ազգային սկզբունքը իր անվիճելի, ուրոյն տեղն ունի :

Որովհետեւ ազգային սկզբունքը տարբեր կերպով են ըմբռնուած ժողովուրդները եւ այդ տարբեր ըմբռնման կիրառութիւնիցն է, որ յաճախ արիւնալուայ տեսարաններ են տեղի ունենում, ուստի հետաքրքրութիւնից զուրկ չպիտի լինէր ազգայնութեան սկզբունքի շրջափոխութեան՝ վերայ հարեւանցի սկանարկ ձգելուց յետոյ, պատասխանել այն բարդ եւ հրատապ վիճաբա-

Տրամվայ, երկայն, շատ տեղ ծառազարդ, մաքուր և լայն փողոցներ, տեղ տեղ ելեքարական լուսաւորութիւն, մեծ ու գեղեցիկ շէնքերով և խանութներով. հրաշալի թատրոն, ընթերցարաններ, մի քանի լրագիր, գեղեցիկ զբօսավայրեր, բազմաթիւ հրէաներ և եւրոպական ազգերից՝ շատ ներկայացուցիչներ, և ուրիշ կեանք, պճնազարդ կիներ և մեծ կապիտալիստներ, ամէն տեսակի մտաբաններ, մրտուեղոտ զգեստներով բանուորներ. մի խօսքով այն բոլորը ինչ որ յատուկ է եւրոպական որևէ մեծ և վաճառաշահ քաղաքին. Օդեսան նրանով է տարբերվում եւրոպական քաղաքից որ ունի միակերպ քաղաք է. նրա մտաւոր կեանքը շատ սահմանափակ է. չը կայ խօսքի և մտքի ազատութիւն, ուրեմն չը կայ և կատարեալ ուղեւորութիւն. Օդեսայում չէ կարելի գաղափարով ոգեւորվել այնպէս, ինչպէս օրինակ Մարսէլում կամ Տրիեստում. Իսկ որտեղ գաղափարի համար չէ կարելի ազատ խօսել, չէ կարելի պայքարի մտնել, այնտեղ կեանքը շատ ճանձրալի, շատ միատեսակ է և գրէթէ բուսական:

Ազատ միտքը և խօսքը գտնուվում են յայտնի և գաղտնի ուտիկանի հակողութեան տակ, իսկ եթէ այնքան յանդուգն եղար, որ դրանց էլ կարեւորութիւն չը տւիր, բազմաթիւ զինուորները պատրաստ են իրանց սուրիններով...

Իո տան մէջ անգամ կաշկանդված են մի փոքր ազատ խօսելու, պատերն անգամ ականջ ունեն. Օդեսայի, ինչպէս ուրիշ կան բոլոր մեծ քաղաքների, ամէն մի տան մէջ մի մի գունապան կայ, եթէ տունը մեծ է մի քանիսը, որոնք լաւ ճանաչում են բոլոր վարձուրդներին, արթուն շան նման հետեւում են սրանց և այցելող հիւրերին ու մանրամասն տեղեկութիւններ տալիս ոտիկանութեան: Ոստիկանական այդ շնիկները աւելի ուշով են հըսկում այն աները, ուր ապրում են ուսանողներ և մտաւոր կեանքի ուրիշ ներկայացուցիչները:

Շարունակ Ռուսաստանում ապրողը արդէն սովոր է այդ ճշնշումներին, նա այնքան էլ չէ զգում իր անհասապէս ճնշումը լինելը, բայց շատ ծանր է այն մարդի համար որը գոնէ մի կարճ ժամանակով ապրել է եւրոպական ուրիշ երկրներում:

Սրանից մի երկու տարի առաջ մի գիշերվայ մէջ բազմաթիւ լեհացիներ էին ձերբակալել, բոլորովին լուռ ու մուռջ, այնպէս որ քաղաքում շատերը չէին իմացել:

Այս տարի մի քանի յառաջադէմ լրագիրներ յարձակվել էին կառավարութեան վրա. մի ան-

գամից բոլոր լրագիրները արգելվեցին. Օդեսայում էլ կարգալու լրագիր չը կար: Չը պէտք է մոռանալ որ բոլոր լրագիրներն էլ ուսուսկան էին:

Ի դէպ է յիշել, որ նոյնպէս այս տարի Պետերբուրգում և Մոսկվայում իրանց ազատ գրածքի և կառավարութեան սխալ մտահայտող անող երկու լրագիրներ. Ս. Պ. Վէլյոմսի, որի խմբագիրը, ցարի անձնական բարեկամն է, գաղարման և պատժի ենթարկվեցին: Միւրը՝ Մոսկվայի յայտնի ազատամիտ Ռուսկիյ Վեդոմոստի թերթն էր: Ուրեմն ցարի բարեկամութիւնն անգամ, թէեւ պահպանողական, բայց բաւական անկեղծ Ռուսաստանի թերթը պատժից չազատեց. և այդ պատժը լուի նրա համար էր, որ այդ թերթում մի յօդուած էր գրված ինչ որ նահանգապետի դէմ, որ կարծեմ ծածկել էր իր նահանգին սպառնացող սովի նշանները: Կրկնում եմ որ շատ ծանր և տաղտկալի է ապրել այնպիսի մի քաղաքում, որը արտաքուստ բոլորովին նման է քաղաքակրթված աշխարհի, բայց տիրող ընթիւմը այնքան ճնշող է որ շնչել անգամ գոտարանում ես: Եթէ լինես Պարսկաստան կամ ասիական որևէ երկրում, այնտեղ արդէն աչքերդ խաբելու, հիասթափվելու բան չես գտնի. հենց առաջին վայրկեանում կզգաս որ վայրենի և ասիական բռնակալի ճիրաններում հեծող երկրում ես և այնտեղ տիրապետող կարգերն էլ պէտք է ճնշող լինեն, միանգամից հաշտում ես այդ դրութեան հետ, սրովհետեւ գեռ ասիական այդ վայրը չը հասած արդէն այդ վայրենի երկրի կարգերի հետ հաշտուած ես եղել...

Բարեկամներս խնդրում էին մի քանի օր մնալ, Ձատիկը միասին անցկացնել, սակայն չը կարողացայ. թէ շտապում էի և թէ չափազանց ճնշում էի Օդեսայի կեանքից, ուր ամէն բան կարելի է անել, ամէն կերպ կարելի ապրել, բայց և այնպէս իրան ազատ չը գայ...

ԱՄՐՈ

### Ք Ր Ո Ն Ի Կ

Պարսկաստանէն կը գրեն մեզ թէ նախկին սատրաղամ Միրզա Ալի Ասկէր խան, էմիրը Սուլթան, հռչակաւոր հայասէր նախարարապետը, աքսորէ վերադառնալով պաշտօնի անցած է: Ինչ որ կապացուցանէ թէ պարսիկ կառավարութեանը վերագրուած հայահալած քաղաքականութիւնը անհիմն է:

Պատրիարքարանը տակաւին ու է պատասխան չէ տուած իզմիրլեանի առաջնորդական տե-

ղեկագրին Խառն ժողովէն վաւերացման մասին: Կեդր. Վարչութեան ցոյց տուած անտարբերութիւնը եզրագրուած պէս կարեւոր թեմի մը առաջնորդական խնդրին համար, անշուշտ չափէն աւելի պախարակելի է:

Կիմանանք թէ դատական վրձնադրով տեղոյս հայ ընթերցարանին բոլոր գոյքերը պարտքի փոխարէն մօտեւս ածուրդով պիտի վաճառուին: Ընկերութեան առնելիքորն են են շէնքին վարձակալը և գրապահը:

Իրաց այս ցաւալի կացութեան պատասխանատու են նոյնքան Վարչութիւնը իբր թոյլ և ապիկար մարմին, որքան հասարակութիւնը իր անտարբերութեան համար: Յատուկ յանձնախմբի մը անմիջական կազմութիւնը կառավարկենք: առաջը առնելու համար այս ամօթալի ածուրդին որ անպատուութիւն է քաղաքիս բոլոր հայերուն համար:

Ռուս թերթերը կը գրեն թէ յուլիս 29ին Խիֆլիզէն Պարսկաստան ճամբայ ելեր է Ռուս կառավարութեան կողմէն կրօնական պատուիրակութիւն մը որ պաշտօն ունի օրթօտոքս եկեղեցիին գիրկը ընդունելու 50,000 ասորիներստորական ընտանիքներանոնց յայտնած ցանկութեան համաձայն:

Շումուրի Տ. Խորէն քահանան իր վրայ եղած ամբաստանութիւնները հերքած ըլլալուն, ինչպէս նաև Թագ. Խորհուրդը համակարծիք գտնուելուն, Կրօն. ժողովը որոշեց է ծանօթ ամբաստանագրին պատճէնը յղել Ռուս. ճուգի Տ. Կարապետ աւագ քահանային, որպէս զի հարկ եղած քընտրութիւնը կատարէ և տեղեկագիրը փութացնէ Պատրիարքարան:

Պայլը Հաուզ 250 օրինակ Աստուածաշունչ նուիրեր է կարօտ եկեղեցիներու և վարժարաններու բաշ ուելու համար:

Իզգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը վերջնապէս կազմուեր է ասանապետութեամբ Տ. Պատրիկ Կիւլպէնկեանի:

«Իււղանդիոն»-ի մէջ կը կարգանք քստմնելի ամբաստանագիր մը ի մասին տեղոյս ազգատան խնամին ատենադպիր Գ. Սիմօնէշեանի գործած անբարոյական զեղծութիւնը: Թէեւ առջի օրէն իսկ շատ միջակ համարում մը ունեցած ենք յիշեալ ատենագրարին վրայ և գանդատած ազգատանամին շուրջը անցած դարձածներէն, և սակայն չենք կրնար հանդուրժել որ այժմ ամէն յանցանք լուի բացակայի մը վրայ ծանրացնելով Գործադիր ժողովին միւս անդամները ուղղակի կամ անուղղակի պատասխանատուութենէ զերծ ցուցնեն ինքիւնքին:

Պուրէշի հրեայ երեւելիք որոշեք են հանդանակութիւն մը բանալ երկրորդական վարժա-

րան մը հաստատելու կառավարական բարձրագոյն դպրոցներէ մերժուած հրեայ ուսանողներու համար: Տիկին Հիրշ 100 հազար ֆրանք խոստացեր է տալ: Այս տողերը կարճանագրենք յիշեցնելու համար նոյն քաղաքին հայ երեւելիներուն թէ ազգասիրութիւնը «հայերենի ուժ մի տաք» պատգամը ուրտալէ տարբեր բան մըն է:

Թօփհանէի նպատամատոյց յանձնած ժողովը 1000 ոսկի զրկեր է պատրիարքարան ի նպաստ գաւառացի կարօտեալներուն: Արգեօք այս նպատակ ալ զատկի և ծնունդի պատրիարքարանին նուրում հնչուն... խօսքերէն չէ:

Հիւանդանոցի որբերէն 7 տարեկան իզմիր զրկուեցան Ս. Ներսէսեան որբանոցին մէջ խնամուելու Մանչեսթրի բարեսէր հայերու ծախքով:

Անցեալ երկուշաբթի օր ձէվահիրճեան և Արսլանեան վարդապետները Պոլսէն էլ միասին ուղեւորեցան, հակառակ ամէնուն և ամէն բանի եպիսկոպոս օժուելու:

Ճէրքէններ օրէ օր շատնաւու վրայ են: Այս անգամ տխուր լուրը Մարաշէն կուգայ: Տեղոյն բողոքական ազօթաբանին տարակազը Թօփուլու Համբարձում անուն սրիւան իր որդեգրած 11 տարեկան որբուհին բռնաբարեր է բուռն պայքարէ մը ետք: Հէք որբուհին վրան գլուխը պատուած խլացուցիչ ճիշեր արձակելով մերձակայ տուն մը կը փախի: Մեղապարտը որ ընտանիքի և զաւակներու տէր է, այժմ բանտը կը գտնուի: Խնդրին ամէնէն քստմնելի կողմը այն է որ սրիկան սպառնացեր է իր ծանօթ ու բարեկամներուն որ եթէ զինքը չազատեն, ինք ալ երեւան պիտի հանէ ուրիշ որբուհիներ որդեգրողներուն նմանօրինակ վարմունքը: Ուրիշ 6-7 որբուհիներ ալ փախած են զիրենք որդեգրող հայ-բողոքականներու տունէն և որոնք նոյնքան դժբախտ ըլլալ կը կարծուին... և և մենք որ բողոքականներու քով բարքերու աւելի մաքրութիւն մը նշմարել կը սիրէինք...

Ռուսական գեւազանը նոր փորձ և ապարդիւն փորձ մըն ալ ըրեր է համոզելու հանրածանօթ հրեայ աղջիկը որ իք հօր տունը դառնայ: Ձուր ջանք և Աղջիկը, միշտ սիրատարի, Գում-Գաբու քահանայի մը տունը կսպասէ:

Թվ է ըսեր որ կնոջ սիրտը փոփոխական է:

Նիւ-Սորքէ Խարբերդ խըրկուած նամակէ մը կը տեղեկացուի թէ Տ. Ստեփան քահանան, տիկինը և 3 զաւակները որոնց համար ըսուեցաւ թէ «Պուրկոյնի» հետ ընկղմած են, ընդհակառակը ազատուած են եղեր:

Երանի թէ ստոյգ ըլլար այս լուրը որ քաղաքին մէջ մեծ ուրախութիւն պատճառներ է :

—Վարչաւոր (Լեհաստան) հայ գաղթականութիւնը օրէ օր աւելնալով մտադրութիւն կայ այնտեղ հայկական եկեղեցի մը կառուցանել : Հրաշալի գաղափար որուն պէտք է ուժ տան մասնաւորապէս Կովկասի հայերը :

—Միայն բժշկական վարժարանէն կամ էջօլ Սանդրալէն չէ որ շրջանաւարտ կելլեն Բարիզի հայ ուսանողները : Ուրախութեամբ կարճանագրենք թէ Տ. Գէորգ Մէքեան, փայլուն քննութիւններ անցընելէ և արծաթ միտալ մը ստանալէ ետք «վարպետ» տիտղոսով շրջանաւարտ ելեր է Բարիզի Կոչկակարական Դպրոցէն :

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ**

**Թ Ո Ւ Բ Գ Ի Ս**

Ռուս կառավարութիւնը պատասխաններ է Դրան վերջին ծանուցագրին ի մասին Կրէտէի օմբուորներու նորոգմանը : Պատասխանը բացարձակ մերժում մըն է : Համոզում կայ թէ միւս տէրութիւններն ալ պիտի մերժեն թուրքոյ պահանջումները :

—Արտաքին գործոց նախարարը ծանուցեր է Սերպիոյ դեսպանին թէ իրատէ մը կը հրամայէր յանձնաժողովի մը կազմութիւնը Սատէտին փաշայի նախագահութեան ներքեւ, պաշտօն ունենալով քննութիւն մը կատարել օմբ. սահմանազրխին և Գոսովարի նահանգին միջադէպերուն վրայ, որոնց զոհ եղած են օմբ. սերպերը :

—Երբ Վիլհելմ Բ. Պոլիս այցելէ, ընդունելութեան պատիւներն ընելու համար սենեկապետ ընարուեր է առեւտրական նախարար Սէլիմ Մէլհամէ փաշա, որ այս առթիւ լիազօրութիւն ու անսահման վարկ ստացեր է : Իր գողնալիք գրամներուն բարի վայելում :

—Փրանսայի, Իտալիոյ և Անգլիոյ դեսպանները Դրան հաղորդեր են իրենց տէրութիւններուն կողմէ տրուած պատասխանը Կրէտէի թուրք զօրաց նորոգման մասին . տէրութիւնները կը մերժեն, յայտարարելով թէ չեն կրնար փոխել ծովակալներուն տրուած հրահանգները :

—Յունաստանի նախկին նախարարապետ Պ. Ռալլի յայտներ է «Ասդի» մէկ խմբագրին թէ Սուլթանին հետ իր վերջին տեսակցութեան պահուն, Խալիֆան՝ Սատովայէն յետոյ Գերմանիոյ և Աւստրիոյ օրինակը յիշելէ ետքը, Յունաստանի և թուրքիոյ միջև մերձեցման մը բռնուն փափագ յայտներ է : Պ. Ռալլի ինքզինքը եռանդոտ կուսակից կը յայտարարէ յունա-

թուրքական դաշնակցութեան և կրտէ թէ պիտի աշխատի ասոր համար, գաւաճան կոչուիլը աչք առնելով : Կը կարծէ թէ ասանկ դաշնակցութիւն մը պիտի կրնայ իսկոյն լուծել յունաթուրքական բոլոր խնդիրները և նոյն իսկ կրէտական խնդիրը :

—Կրէտէի եկած լուրերուն նախելով, օգոստոս 10ին, իսլամները փորձեր են բռնութեամբ խզել Ռեթիմօի զինուորական շրջան, սակայն ետ մղուեր են ռուս զօրքերէն : Մովակալները որոշեր են բնաւ թոյլ չտալ զինուորական ու կէ շարժում, գրաւման զօրքերուն թէ՛ ներսը թէ՛ դուրսը : Այս որոշումը հաղորդեր են ձէվատ փաշային :

—Ռէթիմօի ռուս իշխանութեանց կորովալից ընթացքին շնորհիւ՝ Բրասգելը գրաւող զինեալ պաշարպուրները ստիպուեր են . քաղաք դառնալ : Որով քրիստոնէից հետ բախման մը առաջ քն առնուեր է :

—Սելանիկի մէջ, Ալատինի եղբարց ջաղացքը, որ ամբողջ Արեւելքի նմանօրինակ էն մեծ հաստատութիւնն է հրոյ ճարակ եղեր է, 3 ժամուան մէջ : Ժամը 80,000 օխա ալիւր կարտագրէր : Մթերուած ապրանքին երրորդ մասն ազատուեր է : Ապահովագրական ընկերութիւնները 117 հազար օսկի թուում են : 250 հազար քրիօկրամ ցորեն և 8000 պարկ ալիւր կան եղեր :

**ԽԱՂԱՔԱՎՈՒԹԻՒՆ**

Մանիլայի անձնատուութիւնը, որ խաղաղութեան դաշնագրին ստորագրումէն քանիմը ժամեաքը տեղի ունեցած է, կատարուած է հետեւեալ պայմաններուն մէջ :

Օգոստոս 7ին (Ն.Տ.) ամերիկացիք առաջին վերջնագիր մը զրկեր են Մանիլայի պաշտպաններուն, 48 ժամ պայմանաժամ տալով անձնատուը ըլլալու համար : Օտարազգիները զօր Գերմանիա իր պաշտպանութեան տակ առած է, յաջորդ երկու օրերուն մէջ նաեւը փոխադրուեր են : Օգոստոս 9ին, վերջնագիրը կը նորոգուի : Սպանիացիք ժամանակ կողքին Մատրիտէ հրահանգ ուղելու : Ամերիկացիք կը մերժեն : Օգոստ. 13ի առտուն, ծովակալ Տրեի մէկ ժամ կը շնորհէ անձնատուութեան համար . սպանիացի հրամատարը դարձեալ կը մերժէ . ասոր վրայ ամերիկեան «Օլիմպիա» զրահաւորը կսկսի ուժեղանալ քաղաքին ամրութիւնները : Երկու ժամուան ուժեղանալէն յետոյ, սպանիացիք կտրուին պարպել իրենց բռնած գիրքերը և ցամաքի ամերիկեան զինուորները կսկսին յարձակիլ պատնէշներուն վրայ, անանկ որ սպանիական բանակը միշտ ընկրկելով կերթայ կը փակուի

Մանիլա հին քաղաքին մէջ : Սպան. հրամատարը տեսնելով որ գիմարութիւնն անօգուտ է, ճերմակ գրօջ կը պարզէ ու անձնատուը կը ըլլայ : Այս պատերազմին մէջ ամերիկացիներէն 9 մարդ կսպանուի և 40 կը վերաւորուի . սպանիացոց կորուսարը 150—600 կը հաշուի :

Ամերիկացիք գերի կը բռնեն 11,000 հոգի, որոնց 7,000ը կանանաւոր զօրք, կը գրաւեն 20 հազար մովզէր հրացան, 18 նորածեւ թնդանօթ և մեծաքանակ ռազմամթերք :

—Սամսըն ծովակալը իր նաւատորմի ծովակալ մէկտեղ Նիւ-Եորք հասեր է :

—Քուպայի ապստամբներուն և ամերիկացիներուն յարաբերութիւնները միշտ ձգտուած են : Անոնք կողքին Սանթիակո մտնել զինեալ, բայց թող չի տրուիլ : Քուպայի զօրավար Քասթիլլօ ծանուցեր է լավ ըլլն զօրավարին թէ ինք ու իր սպաներ կը ջանան առաջ քն առնել Քուպայի զօրքերուն ապստամբութեան :

**Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ**

Տ. Վ. Մալիկոնեան, Գոթլան. — Անշուշտ ազատախօսութիւն չը նշանակեր անձի մը վրայ յոգուած գրելէ ետքը, մասնաւոր նամակով տեսակ մը ներդրութիւն խնդրել անկից : Մենք, ձեր նամակը յապաւելով և կամ խմբագրութեան մէջ քանի մը փոփոխութիւններ մտցնելով հանդերձ, հիմը և իմաստը անփոփոխ պահած էինք : Տարբեր թերթի մը մէջ հրատարակել տուէք մեր ըսածին համոզուելու համար : Մնաց որ, Տ. Մուկոֆեանի մասին յայտնուած աննպաստ կարծիքները բխած են զլիաւորապէս Տ. Լուիֆիէն որու անկեղծութեան վրայ մեծ համարում ունիք, թող Պուքրէչի մեր թղթակիցը և նոյն քաղաքը այցելուները որոնք միաձայն եղած են գանգառելու յիշեալ թարգմանիչ—քահանային՝ հայութեան հանդէպ իր պարտականութիւնը ըմբռնելու կերպի մասին :

—Յուսուցիկայ թուով պիտի հրատարակենք յոյժ կարեւոր գրութիւն մը էջմիածնի վեհարանին վերաբերեալ :

**Զ Ե Կ Ո Յ Յ**

Թուականէս սկսեալ ամիս մը ետքը ձեռքէ ծախուելու համար թերթ չպի ի զրկուի Ամերիկա, Եգիպտոս և Ռուսմանիա :

Իմրագրութեանս այս կարգադրութիւնը այժմէն կը հաղորդենք ձեռքէ թերթ ծախուելու նողներուն, որպէս զի եթէ կը փափագին յարատեւ ընթացողները մնալ «Շարժում»ի, ժամանակ ունենան բաժանորդագրուելու :

—)(—)

**Պ Օ Ր Ս Ա**  
Վառնա 12 Oqrusnu  
ՊՈՒՂՏԱՅ  
Վազօն, լիպրա 57—60, հէքթօլ. 9.20 ֆրանք  
Արապա, լիպրա 59—60 հէքթօլ. 9—11 ֆրանք  
ԱՐԲԱ ԵՆԵՆԻ  
Լիպրա 42—44 հէքթօլ. 4.20—5.20 ֆրանք  
ՅԱՍՈՒԼԵԱ  
Կիւնտէ 30—40 առապա կէմէքտէ տիր 100 օգգասը 16—23 ֆր. մալա կէօրէ :  
Առապա մուամէլէսի՝ Նարօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր .  
Կիւնտէ 200—250 արապա պուղտայ, 60—70 արապա արբա կէմէքտէ տիր :  
Մըսըր եօգ արբ :

**ԾԱՆՈՒՅՈՒՄ**  
Կուզէք վաճառուան լաւ պաշտօնեայ մը . զիմեցէք Շարժումի խմբագրութեան, որ ցոյց կուտայ հայ երիտասարդ մը որ ինը տարիէ իվեր կառավարական պաշտօն կը վարէ եւ ստամարակալութեան ճիւղին համար Վառնայի առեւտրական գրասենեկէ վկայուած է :

**ՎԱՐՊՕ**  
**ԵՐԿՈՒ ՍԷՐ**  
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ)  
—)(—  
( Գին 1 Ֆրանք )

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպպի Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսուրք՝ Հայկ Մալախանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուկոֆ Արժրուելի քով :  
Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Ռուսութեան գրհերը» :

**Ն. ՍՈՒՅԿԵԱՆ**  
Նկարիչ—Լուսանկարիչ  
Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Տօպրիչի մէջ լուսանկարչատուն մը հաստատուած է ուր բացի ամէն մեծութեամբ լուսանկարներէ, կը պատրաստէ նաեւ լուսանկարի և գարաքալէմ պատկերներ :

Այլ և այլ քաղաքներէ անոնք որ կը փափաքին իրենց իւզաներկ կամ քարաքալէմ պատկերք ունենալ, փափակութեամբ եւ ճշգրիտ նմանութեամբ գծուած, թող փութան զրկել իրենց լուսանկարը յիշեալ լուսանկարչատունը : Գինները յոյժ չափաւոր : 6—10

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**  
**Ս. ՍԱՊԱՂ-ԳԻՒԼԵԱՆ**  
—)(—  
ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ  
ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏԻՑ  
—)(—  
Գին 1 Ֆրանք

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը :  
**ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, ՊՇՍՐԺՈՒՄԻ**  
—)(—  
Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցեատոմս, նամակազուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաեւ պրօշիւններ :

Գիններն յոյժ գլուրամասշտակիւ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին :

Печантыца „Взаимность“ Варна.